

Վաղինակ Ծ. Վրդ. Մելոյեան

ԵՐԵՒՄԱՆ ԽԱՉԻ ՏՕՆԸ

Անթիլիաս
2017

Երեւման Խաչի Տօնին Դրուագը Եւ Անկէ Բղխող Երկու Պատգամներ

Երեւման խաչի տօնն է այսօր: Չոր-
րորդ դարու առաջին կեսին, Արիոս ու իր
հետեւորդները կատաղօրէն կը պայքա-
րէին Խաչեալին ու անոր խաչին դէմ, յայ-
տարարելով թէ Քրիստոս աստուածային
ծագում չունէր: Անոնց պատասխանեց
ո՛չ միայն Քրիստոսի Եկեղեցին, այլեւ՝
նոյնինքն Քրիստոս: Արդարեւ, անոնց
պատասխանը եկաւ երկինքէն ու երկին-
քի Տիրոջմէն, երբ Տէրը ինք, 351 թուին, իր
խաչի նշանը երեւցուց Երուսաղէմի երկ-
նակամարին վրայ, զանիկա տարածելով
Գողգոթայէն մինչեւ Չիթենեաց լեռ: Բո-
լո՛րը՝ հօտ, հովիւ եւ հովուապետ, տե-

սան խաչը. տեսան խաչը ու ցնծութեամբ
համակուեցան, տեսան խաչը ու հաւատ-
քով զօտեպնդուեցան, տեսան խաչը ու
առաւել եւս սիրեցին Խաչեալը, տեսան
խաչը ու ապաւինեցան անոր զօրութեան:

Խաչի նշանը տեսան նաեւ անոնք՝
որոնք կը ներկայացնէին հոգեւորապէս
տկար դասակարգը: Տեսան եւ փոխակեր-
պուեցան: Արդարեւ, ի տես խաչի երեւո-
մին, անհաւատ մարդը՝ ընդգրկեց Քրիս-
տոսի հաւատքը. թերահաւատ մարդը՝
արմատախիլ ըրաւ իր ներսիդիէն թերա-
հաւատութեան տատասկը. կասկածա-
միտ մարդը՝ վստահութեան շունչով տո-
գորուեցաւ. վեհերոտ մարդը՝ դարձաւ
քաջ ու համարձակ վկան Քրիստոսի. զի-
նաթափութեան մասին մտածող հաւա-
տացեալը՝ վերազինուեցաւ Աստուծոյ
սուրով՝ Տէր Յիսուսի խաչով. անտարբե-
րութեան փռշիով ծածկուած մարդը՝

վերգգեցաւ նախանձախնդրութեան հրե-
ղէն զգեստը:

Հաստատեցի, թէ հօտ, հովիւ եւ հով-
ուապետ տեսան խաչը: Հովուապետը
սակայն, Կիրեղ, պատրիարքը Երուսա-
ղէմի, խաչի նշանը տեսնելով ու անոր
համար ցնծայով չքաւարարուեցաւ, այլ
երկու բան ըրաւ: Առաջին, համախմբեց
հաւատացեալները եւ խրախուսական,
հայրական ու հայրապետական խօսքե-
րով քաջալերեց զանոնք որ հաստատ
մնան իրենց հաւատքին մէջ, եւ անյող-
ողող՝ կեանքի դժուարին պահերու դի-
մաց: Եւ երկրորդ, խաչի նշանին երեւումը
առիթ դարձուց, նամակ մը գրելու Կ.Պոլ-
սոյ Կոստանդ կայսրին, զայն զգօնու-
թեան, զգաստութեան եւ զգուշութեան
հրաւիրելու, որպէսզի յետս կոչէր դատա-
պարտուած Արիոսականութիւնը վերա-
կանգնելու իր որոշումը, որ կրնար խան-

գարել եկեղեցւոյ ներքին կեանքն ու խաղաղութիւնը, եւ միաժամանակ, Կիրեղ յիշեցուց անոր իր հօրը՝ Մեծն Կոստանդիանոսի պաշտպանած ուղղափառ հաւատքը եւ Քրիստոսասիրութիւնը: Պատմութիւնը կ'ըսէ, թէ սուրբ խաչի երեւման օրը աւելի քան 50.000 անձեր մկրտուեցան, որոնց մեծ բաժինը մկրտուեցաւ Երուսաղէմի սուրբ Յակոբեանց միաբանութեան Հայոց տաճարին մէջ:

Երեւման խաչի տօնին առիթով երկու մտածումներ կը բաժնեմ ձեր հետ.-

1) 4-րդ դարու հաւատացեալներուն նման, մե'նք եւս կարիքը ունինք տեսնելու Տիրոջ խաչի նշանը, որպէսզի մե'ր ալ սիրտերուն մէջ վերարձարծուի հաւատքի կրակը: Բայց որպէսզի հաւատքի կրակը յառաջ գայ մեր ներսիդին՝ պէտք է հաւատքի՝ աչքերով նայինք խաչին, ինչպէս 4-րդ դարու հաւատացեալները ըրին, այ-

լապէս՝ անոր մէջ լոկ նիւթը պիտի տեսնենք, եւ ոչինչով պիտի օգտուինք անկէ:

Երբ կը խաչակնքենք՝ պէտք է հաւատանք որ Խաչեալն է որ մեր սիրտերուն մէջ կ'առնենք, որպէսզի խաչի նշանը գործազրեցինք մեր մարմիններուն վրայ՝ հետը օրհնութիւն ու բժշկութիւն բերէ մեզի:

Երբ կը խաչակնքենք մենք զմեզ պաշտպանելու համար Չարին դէմ՝ պէտք է հաւատանք որ այդ խաչակնքումը մեզ կը կապէ մեր Արարիչին ու մեզ անպարտելի կը դարձնէ Չարին դէմ մեր պայքարին մէջ:

Երբ խաչին առջեւ կանգնած կամ ծնրադիր կ'աղօթենք՝ պէտք է հաւատանք որ մենք խաչին նիւթին առջեւ չէ որ կանգնած ենք, այլ անոր հիւթին՝ Քրիստոսի առջեւ: Խաչին հիւթը Խաչեալը

ինքն է: Նիւթին վրայ կախուած Հիւթն է
որ կեանք կու տայ մեզի:

Օրհնութի՛ւն է խաչը, երբ անկէ օրհ-
նութիւն առնելու համար է որ անոր կը
դիմենք: Զօրութի՛ւն է խաչը, երբ անով
զօրանալու համար է որ անոր կը կառ-
ջինք:

Ամէն անգամ որ խաչին նայինք՝ հա-
ւատքո՛վ նայինք, որովհետեւ անոր վրայ
էր որ մեռաւ մեր հաւատքին Հիմնադիրը,
եւ անոր միջոցաւ էր որ կատարուեցաւ
մեր հաւատքին հիմնադրութիւնը:

Ամէն անգամ որ խաչին նայինք՝ յոյ-
սո՛վ նայինք, որովհետեւ Յիսուս անոր
վրայ մեռնելով՝ զայն յոյսի մականի փո-
խակերպեց: Յոյսի այս մականին միջո-
ցաւ միայն կրնանք յաւիտենական կեան-
քի յոյսը ձեռք ձգել:

Ամէն անգամ որ խաչին նայինք՝ սի-
րով լեցուն աչքերո՛վ նայինք, որովհետեւ

Քրիստոս անոր վրայ մեռնելով՝ զայն վերածեց Աստուծոյ սէրը աղբերացնող աղբիւրի. հոնկէ՛ էր որ մարդիկ դարեր շարունակ Աստուծոյ սէրը ըմպեցին: Ուստի, անոնք որոնք խաչին կը մօտենան, պէտք է գիտնան որ Աստուծոյ սիրոյն աղբիւրին է որ կը մօտենան. այս հաւատքով մօտեցողները միայն կրնան Աստուծոյ սէրը ըմբռնել խաչաղբիւրէն:

2) Խաչի նշանը երեւցաւ Երուսաղէմի երկնակամարին վրայ ու տարածուեցաւ Գողգոթայէն մինչեւ Ձիթենեաց լեռ: Անիկա մեր ալ կեանքի երկնակամարին վրայ պէտք է երեւի ու տարածուի մեր կեանքի բոլոր երեսներուն, բոլոր պահերուն ու բոլոր ժամերուն վրայ:

Խաչը պէտք է երեւի մեր ամենօրեայ կեանքին մէջ:

Երբ կը հանդիպինք անհամբերելի մարդոց՝ հո՛ն է որ համբերութեան նշա-

նակ եղող Քրիստոսի խաչը պետք է երեւի մեր կեանքին մէջ, ու անհամբերելիին համբերել սորվեցնէ մեզի:

Երբ կը հանդիպինք մեզ աստղ մարդոց՝ հո՛ն է որ սիրոյ աղբիւր եղող Քրիստոսի խաչը պետք է երեւի մեր կեանքին մէջ, ու անսիրելիին սիրել սորվեցնէ մեզի:

Երբ կը հանդիպինք դառնութեամբ լեցուն մարդոց՝ հո՛ն է որ քաղցրութեան ակ եղող Քրիստոսի խաչը պետք է հանդէս գայ մեր կեանքին մէջ, ու դառնութիւնը քաղցրութեամբ դիմակալել սորվեցնէ մեզի:

Երբ կը հանդիպինք խռովութիւններու ու խռովարարներու՝ հո՛ն է որ խաչէն աղբերացող խաղաղութիւնը պետք է արտացոլայ մեր կեանքին մէջ, ու խռովութիւնները խաղաղութեամբ տանիլ սորվեցնէ մեզի:

Եւ տակաւին,

Երբ մարդիկ մեզ կը ծաղրեն՝ թող որ Յիսուսի խաչը երեւի մեր կեանքին մէջ ու չհակադարձե՛լ սորվեցնէ մեզի:

Երբ մարդիկ մեզ կը վիրաւորեն՝ թող որ Տիրոջ խաչը երեւի մեր սրտին մէջ ու ներե՛լ սորվեցնէ մեզի:

Երբ մարդիկ մեզ կը բամբասեն՝ թող որ Խաչեալին խաչը երեւի մեր հոգիին մէջ ու լուռ մնա՛լ սորվեցնէ մեզի:

Երբ մարդիկ մեզ կը մերժեն՝ թող որ Քրիստոսի խաչը երեւի մեր մտքին մէջ ու մերժուածը ընդունի՛լ սորվեցնէ մեզի:

Մէկ խօսքով, մարդիկ պէտք է տեսնեն խաչին զօրութիւնը, սէրը, փառքն ու գեղեցկութիւնը մեր կեանքին մէջ, որ պէտքի հաւատան թէ Խաչեալը որուն կը հետեւինք եւ գոր կը պաշտենք՝ զօրաւոր է, սէր է, փառաւոր է ու գեղեցիկ, եւ իրենք ալ ուզեն դառնալ անոր խաչին: